

Վազգեն Հ. Սաֆարյան
բանաս. գիլ. դոկտոր

ՃԱՆԱՊԱՐՀԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԲԱՖՖՈՒ ԱՐՁԱԿՈՒՄ

Մեծ վիպասանի ծննդյան 175-ամյակի առիթով*

Բաժքին հայ գրականուրյան համար առանցքային Խորհնացի-Արովյան գաղափարական շարժման շարունակուրյունն էր, որի միջոցով գրականուրյունը սպանչնեց ազգի գոյարձնուրյան բաղադրիչը լինելու առարելուրյունը:

Բաժքին իր գրական առաջին խև քայլերից այդ առաքելության բարձրության վրա էր, ուստի վստահ էր, որ «ոռմանները» որպես կախարդական հայելի, կոչված են ոչ միայն ժողովրդի կյանքի «ավերված պատկերքը» ներկայացնելու, այլև ավերը հարթելու, ժողովրդին ազատության գիտակցության բերելու ուղիներ ցույց տալ, քանի որ «մի լավ ոռման» կարող է մի ազգ փրկել։ Ոչ միայն 60-ականների (Նալբանդյան-Պեշիկրաշլյան-Պատկանյան) ազդեցությունը ներառած քաղաքացիական բանաստեղծություններում, այլև իր առաջին տպագիր երկի «Աղբանարա վանքը» ակնարկի մեջ, իսկ հետո նաև հրապարակախոսական հոդվածներում, ուղեգրություններում, բրդակցական նամակներում, պատմական և այլ ուսումնասիրություններում, անշուշտ նաև՝ գեղարվեստական ստեղծագործություններում, Բաժքին հստակորեն իրագործում է այդ խնդիրը, ներկայացնում է ժողովրդի կյանքը, ընդհանրացնում երևույթները, որոնում ելքեր՝ կրթալուսավորական գործից մինչև գինված պայքարի ուղին։

Այս առումով, Բաժքու գրական առաջին քայլերից սկսած, նման առաքելական գործառույթի իրագործման մեջ առանձնահատուկ իմաստ է ձեռք բերում ճանապարհի խորհուրդը՝ մեծ գրողի գաղափարական ու գեղագիտական վերացարկումների, ուղղակի-աշխարհագրական և մետաֆորային-խոհական ընկալումների համակարգը, որի հիմնական շերտերն են՝ երկիրն ու ժողովրդին ճանաչելու հոգար, պատմությունը արդիական գուգահեռներում տեսնելու ձգտումը, դպրոցի ու գենքի փրկչական առաքելության հիմնավորումները, «դրսի» ու «ներսի» հարաբերությունների ոռմանանիկական իմաստավորումը, կերպարի և նրա զարգացման փոխարերումն իբրև ընթացք, որի արդյունքը ինքնագիտակցման ազգային ու անձնական սահմանների ծագրությունն է և վերջապես, արկածը՝ իր

Բ (Բ) պարկ, թիվ 4 (32) հոդվածներ-դնկումներ 2010

ԿԵՐ համահայկական հանդիս

* Յողվածն ընդունվել է տպագրության 20.10.2010:

անսպասելիության ու խորհրդավորության գաղափարագեղագիտական դերով և դրսնորման բազմազանությամբ:

Ամեն մի «արտաքին» ճանաչում ի վերջո ինքնաճանաշողություն է, և սա Ռաֆֆու համար իմաստափրության ամենալուրջ հիմունքներից է: «Ինքնախարեռություն» հոդվածում (1878թ.) նա փաստարկում է, թե բավական է խոսել տնտեսական անկարգության, փաճառականության անկանոնության, արհեստների հետամնացության, գյուղացու ողորմելի վիճակի, կրթության, լրագրության, ընտանիքի, երիտասարդության, կնոջ և այլնի ծանր դրության մասին, միշտ «միևնույն պատասխանն են ստանում. ամեն ինչ լավ է մեզանում»¹: Նման «ինքնախարեռության հակառակն է ինքնաճանաշողությունը... Այստեղից է առաջ գալիս տոկուն աշխատությունը, դա է ոգևորում մարդուն դեպի անդադար առաջադիմություն»²: Հակառակը, կամ՝ տգիտությունը ուղղակի անշարժության է մոլում, ծնում է չար արատներ, ինչքան էլ հայր փորձի դրանք քողարկել ազգային ավանդներին հարազատ մնալու պահպանողականությամբ, թե՝ «Լուսավորչի ժամանակից մինչև ցայծն անփոփոխ է պահել յուր կրոնը, կամ թե ծաղը առնե մյուս ազգերին, իբր թե նոցա մեջ շատ փոփոխություններ եղած են... Չեմ կամենում լսել այն հիվանդուս ազգափրությամբ կուրացած քննարանների բամբասանքը, որը Հայաստանը միմիայն աշխարհացոյցի վերա տեսանելով հեռավոր սահմանների վերա, ամենին շունին տեղեկություն նորա այժմյան վիճակի մասին»³: Հայաստանն ու հային ճանաչել տալու վերոհիշյալ ու հնարավոր այլ գործուներին Ռաֆֆին անդրադել է իր շատ հոդվածներում և գեղարվեստական երկերում, որոնք նաև ճանապարհորդության արդյունքում ծնված ժանրային օրինակներ են՝ համապատասխան քովանդակային սահմաններով: Այդ միտումի ամփոփագրերն են նրա ուղեգործությունները՝ «Աղքամարա վանքը», «ճանապարհորդություն Պարսկաստանի», «Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում», «Մի հատված իմ ճանապարհորդությունից Ղարաբաղում», «ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ազուլիս»:

Ռաֆֆին իր նպատակի հիմնավորվածությունը նշում է բոլոր հնարավոր առիթներով: Թվարկված գործերից վերջինի մեջ, օրինակ, նա ոռուս-քուրքական պատերազմից հետո գաղթական դարձած հայության վիճակի կոնկրետ գնահատումն իրականացնում է ճանապարհորդական դժվարությունների, բնապատկերի ազդեցունակության և տեղանքի ճանաչողական կարևորության ցուցադրումներով. «Մի քանի տեղեր հեռավորության պատճառով կամ հարմարություններ չգտնելով՝ ես գնալ չկարողացա, բայց որքան տեսա և գրեցի, այդ ևս բավական է մի փոքրիկ գաղափար տալու, թե որպես է ապրում հայ գաղթականը»⁴: Պարզ է, որ այս խնդիրը առանցքային պիտի մնար Ռաֆֆու գեղարվեստական երկերում ևս. պարսկահայերի կյանքի ճանաչելի մանրամասները՝ «Սալիք» վեպում, առևտրավաշխատուական խավի կենցաղային ու սոցիալ-հոգեբանական անկումները՝ «Ուսկի աքաղաղ», «Մինն այսպես, մյուսն այնպես», «Զահրումար» վեպերում, արևմտահայության ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական, կենցաղային անազատությունների ու ապրելակերպի ազգագրական մանրամասների պատկերները ծրագրային-քաղաքական վեպերում, որոնցից «Կայձեր»-ին

1 Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 11, Եր., 1991, էջ 17:

2 Նույն տեղում, էջ 15:

3 Նույն տեղում, հատ. 10, Եր., 1991, էջ 27-28:

4 Նույն տեղում, հատ. 9, Եր., 1987, էջ 174:

արժանավորապես տրվել է «հայ կյանքի հանրագիտարան» գնահատականը: «Խաչագողի հիշատակարան»-ում Ռաֆֆին պարզորշ սահմանում է, որ բոլոր անհատական արատների ակտները հասարակական միջավայրն է (վիպասանը հետազոտել էր սոցիալ-դարվինիզմը, գրել «Մարդո գոյության կովի մեջ» ուսումնասիրությունը). «Չեզ հանցանքի մեջ ձգեցին հանգամանքները... Դուք եք դարձաք մի չարագործ, դուք ծնունդ եք նոյն մքնոլորտի, այլ խոսքով՝ նոյն հասարակության, որ իր միջից արտադրել է ձեզ⁵... Ստրուկուրյունը խաչագողների մեջ զարգացրեց նենգավորություն»⁶: Սակայն «Խենք»-ում նա եզրահանգում է, որ ազգային խենդությունն ու անմիարան ինքնախարեւորյունն իրենց արտաքին ու ներքին բոլոր դրդիչներով, հաստատում են այն միտքը, որ «որևէ ժողովրդական շարժման գաղափարը մի քանի անհատների երևակայության ցնորք է միայն և տակավին չէ ընդհանրացել ամրոխի գոնեն մի մասի մեջ»⁷: Այդ ամրոխին կամ ժողովրդին գիտակցության բերելու համար գաղափարակիր անհատը պիտի ճանաչի նրան, որ կարողանա ինքնաճանաշման բերել, և դրա համար երկար ժամանակ է պետք, Վարդանի երազի՝ 200 տարվա չափ: Հակառակ դեպքում՝ Դուդուկշյանի նման նա փարիզյան բարիկադների ճառերով ծիծաղելի վիճակների մեջ կիայտնվի, մինչև որ գիտակցի իրականությունը, շրջագայի Հայաստանում և հիմնավոր ճանաչումից հետո գտնի ժողովրդի հետ երկխոսության հիմքը. «Ես այժմ ձեզ հետ պետք է ձեր ձևով՝ երկրագործի ու անասնապահի լեզվով խոսեմ»⁸:

«Կայծեր»-ը այս առումով դառնում է ասվածի գաղափարագեղարվեստական հանրագումարը: Ռաֆֆին այլևայլ առիթներով շեշտել է այս վեափ ճանաչողական դերը՝ որպես հիմք մնացած գաղափարների. «Մտադրված լինելով նկարել Տաճկաստանի հայոց ներկա դրության և նրանց մոտավոր անցյալի ճիշտ պատկերը՝ վերջին քաղաքական անցքերի տպավորության ներքո (Հայկական հարցի միջազգայնացումը - Վ.Ս.), ես ձեռնարկեցի իմ «Կայծեր» անունով վեալը»⁹: Վեափ սյուժետային հիմքը հենց ճանապարհորդությունն է, ուստի Հայկունու (Եղ. Գեղամյանց) հետ հայտնի բանավեճում սնանկ համարելով այն պնդումը, թե իբր` վեափ հեղինակը «տաճկահայերին ճանաչում է միմիայն լրագրերից և մի քանի անկատար, անճիշտ գրքերից», Ռաֆֆին կրկին ընդգծում է, որ վեափ առաջին մասի դեպքերի վայրը իր ծննդավայր Սալմաստն է, իսկ մնացած մասի գործողությունները կատարվում են Արևմտյան Հայաստանում, հիմնականում՝ Վանում, «որտեղ հեղինակը մի քանի անգամ ճանապարհորդել է», դրա արդյունքում իրատարակել գործեր, և ուրեմն՝ ««Կայծերը» գրելու համար Ռաֆֆին ինքը անձամբ ուսումնասիրել է այդ երկրների կյանքը»¹⁰: Այնայն, որ ճանապարհն ու ճանաչումը «Կայծեր»-ի գաղափարական ու գեղարվեստական հենքն են, որը վիպասանը, որպես ծրագրային դրույթ, անվանում է «հայրենագիտություն»: Նրա բոլոր եզրահանգումներն արվում են կոնկրետ պատկերներից և ընդգծվում հենց գլուխների վերնագրերում. «Ի՞նչ է քուրքը, և ի՞նչ է քուրքը», «Ի՞նչ է պարսիկը», «Քրդուիին և հայուիին», «Հայ հովիվները», «Եղիղիներ», «Վաճառականներ», «Հոգևոր առաջնորդը», «Կտոր անապատը», «Վարագ», «Պանդուխտ վանեցին»

5 Նույն տեղում, հաս. 5, Եր., 1985, էջ 275:

6 Նույն տեղում, էջ 277:

7 Նույն տեղում, հաս. 4, Եր., 1984, էջ 330:

8 Նույն տեղում, էջ 257:

9 Նույն տեղում, հաս. 11, էջ 305:

10 Նույն տեղում, հաս. 11, էջ 396:

և այն, որոնց հարցադրումներն արդեն իսկ կային նրա հողվածներում: Ազգային թշվառության պատկերների վրա բացատրվում է հայերի խելցության պատճառը՝ քրիստոնեության անպայքարունակ քարոզը և օստարի՝ գրեթե հավերժական տիրակալությունը, որ մարմնավորվում է «Զալալեդյին»-ում՝ Սահրատի հոր, «Խենք»-ում՝ տանուտեր Խաչյոի և «Կայձեր»-ում՝ Ֆահրատի կերպարների մեջ: Եվ այն, որ այդ «ստրկությունը դարձել է ժողովրդի մեջ բնավորություն... Միթք հեշտ է փոխել բնավորությունը»¹¹:

Բաֆֆու կերպարների խոսքի ու գործի մեջ ևս անընդհատ շեշտվում է ճանաչման հիմնավորությունը. Կարոյի և Ապանի խմբում հայտնված Ֆահրատին նրա քերին, որ մանր կրքերի կրող է, խորհուրդ է տալիս.

«- Հեռացիր այս մարդերից, եթե չես կամ ենում կորցնել քեզ:

- Ես ուզում եմ ավելի լավ ճանաչել նրանց»¹²:

Բաֆֆու մոտ հաճախ կյանքի այս կամ այն կողմի մասին ընդհանրացումն արվում է իրեն ճանապարհի թելադրած դիտարկում. «Քոլորովին մուր էր, երբ հասանք Այգեստան»¹³, հայի վիճակի տիպական հատկանիշների ակնարկ՝ «Այստեղ կառավարիչ չկա, այստեղ կա միայն կեղեքիչ»¹⁴, կամ «Աղքատը ին աղքատ է, իսկ հարուստն է ստիպված է աղքատ ձևանալ... Տեսար՝ մի օր թուրքերը մի «շառ ու շուռ» հնարեցին ու ինչ որ ունի, ձեռքից խեցին»¹⁵:

Անընդհատ հաջորդում են ճանապարհորդական բնույթի հիշատակումները. «Վերջապես հասանք Բաղեշ, որ այլ անունով կոչվում է Բիրիխ»¹⁶, կամ «Ամբողջ գիշեր ճանապարհ գնալով՝ առավոտյան լույսի հետ բացվեցավ մեր առջև Սուշի գեղեցիկ դաշտը... Որքան բաներ է պատմել այդ դաշտի մասին Ապանը»¹⁷: Այսպես, ճանաչողության ու ինքնաճանաչման երկար ճանապարհ անցնելով՝ Ապանը ինքնազիտակցության եկող Ֆահրատին հիշեցնում է, որ իրենք տեսան հայրենիքի բնությունը, բերդեր ու ավերակներ, բնակավայրեր ու մարդիկ. «Դու անցար մեր հայրենիքի նշանավոր մասը: Դու քո աչքով տեսար և տեղի վրա ծանրացար մեր ժողովրդի դրության հետ, նրա անցյալի ու ներկայի հետ: Հայրենազիտությունը գիշավոր ուսմունքն է այն անձանց համար, որոնք նվիրվում են ծառայելու հայրենիքին... Ես ձգեցի քո մեջ ապագա հառաջադիմության սերմերը միայն: Իսկ գիտության լույսը կծեցնե, կաճեցնե և պտղաբեր կկացուցանե նրանց»¹⁸:

Եվ այսպես՝ **Ճանապարհը** տեսողականորեն բացում է տվյալ ժամանակի հային ու Հայաստանը ճանաչելու հնարավորությունը և հիմնավոր դարձնելով ընդհանրացումները ազգային տեսակի խորքային հատկանիշների մասին՝ միշտ հարկ եղած դեպքում սկսելով պատմական հեռուներից: Մի կողմից ծանր ինքնախստովանանքը, թե «Հայր աշխատաեր է, այո՛, նորա խնայողությունը հասնում է մինչև ժաւոտքյան, նորա ջանքը հասնում է մինչև անձնանվիրության, նաև վաստակում է արծար՝ միայն արծար ունենալու համար: Նա դառնում է հարուստ, ուրեմն՝ հասավ յուր նպատակին... Նա դեպի բոլորը սառնասիրտ է: Ասել

11 Նույն տեղում, հատ. 5, էջ 433:

12 Նույն տեղում, էջ 549:

13 Նույն տեղում, հատ. 6, Եր., 1986, էջ 7:

14 Նույն տեղում, էջ 15:

15 Նույն տեղում, էջ 36:

16 Նույն տեղում, էջ 360:

17 Նույն տեղում, էջ 373:

18 Նույն տեղում, էջ 411:

է, թե նա ապրում է կատարյալ եսականության մեջ»¹⁹: Կամ՝ «Հայր յուր հանգստուրյունը և յուր բարօրությունը միշտ երևակայում է հայրենի երկրի սահմանի դրսում... Կարծես նորա քնիկ երկրի հորիզոնը յուր համար բունավորված լինի»²⁰: Իսկ մյուս կողմից՝ նոյն հոգսը դրսուրվում է պատմական անցյալի և դրա այժմեականության որոնումների մեջ. «Դավիթ Բեկ»-ի գրության առիթով և տպագրության կեսին Ռաֆֆին գրում է. «Ես ընդհատեցի «Դավիթ Բեկի» հրատարակության շարունակությունը «Մշակի» մեջ՝ դիտավորություն ունենալով անձամբ ճանապարհորդել Սյունյաց աշխարհում... Իմ ճանապարհորդության նպատակը ոչ միայն «Դավիթ Բեկը» կատարելագործելն է, այլ, որքան հնար է նյութեր հավաքել Դավիթ Բեկից հետո հայտնված մելիքների կյանքից և գործունեությունից»²¹: Իսկ այդ ճանաչողության դրամատիկ խոստովանանքը Ստեփանոս Շահումյանի ընկալմամբ, հնչում է խիստ ձևակերպումով. «Հայ ժողովուրդը կատարյալ ոչխարային բնավորություն ունի. մեկը պետք է առջևից գնա, որ մյուսները հետևեն նրան: Բայց ո՞վ կարող է լինել այդ մեկը»²²:

Ճանապարհի այս գաղափարական նախահիմքի վրա Ռաֆֆին առաջարկում է «դրսի» և «ներսի» տարածական-փիլիսոփայական գիտակարգի (կատեգորիայի) բարդ հարաբերությունները: «Ներսի» համընդիանուր խավարն ու անկումները, իրենց այլազան պատճառներով ու դրսուրումներով, անխոսավելի են դարձնում «դրսից» հայտնված մեկի անձնազնի առաքելության անհրաժեշտությունը, ինչը ոռմանտիզմի պուտիկայի բուն արտահայտություններից է: Ռաֆֆու գաղափարակիր հերոսները գալիս են «դրսից», իսկ ճանապարհի փիլիսոփայությունը ստեղծում է դրա տարածական իմաստավորումը, գուցեն՝ պատրանքը: Այս իրավիճակը ակնառու է ոչ միայն քաղաքական գեղեցրում, այլև սոցիալական երկերում: «Ուսկի աքաղաղ»-ում Միքայելը դուրս է գալիս Մասհյանցի «ներքին» միջավայրից, որպեսզի բացատրելի լինի նրա արածը. «Վերադառնալով եվրոպական քաղաքներից՝ բոլորովին ուրիշ մարդ էր դարձել, կրթված, տաշված և կոկված, այժմ նրա ամեն մի վարունքը, ամեն մի խոսքը հրավիրում էր իր վրա պատկառանք ու համակրություն»²³: Այս դեպքում միայն հասկանալի կրառնա Ստեփանի գնահատականը՝ նա դարձավ իրենց «քանդված տան» իսկական «ոսկի աքաղաղը»:

Նոյն կերպ «Սինն այսպես, մյուսն այնպես» վեաի հերոս Ռուբեն Արուայանը «վաճառականի գործերով քանիցս անզամ ուղևորվեցավ դեաի արտասահման, տեսավ Փարիզը, Մարսելը, եղավ Լոնդրոնում, Մանչեստրում և ծանոթացավ զանազան եվրոպական առևտրական քաղաքների հետ»²⁴, որի արդյունքը եղավ Ալա-Պարոնովի խանութին կից բացած կրապակի ճակատի հանրուգն ցուցանակը՝ «Ենց օմահա» («Առանց խարեւության»): Ասիական ու եվրոպական միջավայրերի պարզ հակադրությունը Ռաֆֆու ազատմիտ պատկերացումների մեջ դառնում է «ներսի» և «դրսի» խորիրդակիրը, որ Եվրոպան պահպանում է քաղաքակրթության չափանիշի պատրանքը: Արևմուտքից՝ Փարիզից է գալիս «Դոդուկջյանը՝ Խոնմի» գաղափարակիր հերոսներից մեկը, ճանապարհը Ասլանին ու Կարո-

19 Նոյն տեղում, հատ. 10, էջ 152-153:

20 Նոյն տեղում, էջ 333:

21 Նոյն տեղում, հատ. 11, էջ 36:

22 Նոյն տեղում, հատ. 7, Եր., 1985, էջ 12:

23 Նոյն տեղում, հատ. 3, Եր., 1984, էջ 319:

24 Նոյն տեղում, էջ 373:

յին հանելով «ներսի» միջավայրից՝ Հնդկաստանով հասցնում է Ամերիկա և «դրսից» նրանք գալիս են այդ նույն միջավայրը՝ հիմնավորապես պատրաստ ազատագրական մեծ առաքելությանը:

Րաֆֆու մոտ **Ճանապարհը** ճանաչողությամբ՝ ինքնահաստոնացման միջոց է, քանզի այդպիս ինքնազիտակցության պիտի զա խեղճության միջավայրից ու դրա կրողը հանդիսացող հորից մերժված Սարհատը, ով հիմա «գալիս էր Վանից դեպի Աղրակ քերող ճանապարհով: Դուրս գալով Խոչարի ձորից՝ նա արդեն հասել էր Չոխսա Գաղիկ կոչված լեռնային անցքը: (Նա) մենակ էր»²⁵ և զնում էր իր սիրած աղջկան փրկելու, բայց Զալալերդինի արշավանքների համազգային օրիհասը նրան հասցնում է **բռլորի** ազատության համար հայդուկային կովի գիտակցության:

Ճանապարհը Ողական ամրոցից մինչև Արարսի ափերը հաստատուն որոշման է քերում ոչ միայն Սամվելին, ում մեջ հորն սպանելու «աղոտ միտքը» վերաճում է «վճռական նպատակի», այլև խաչագողային մութ խորշերի միջով Մուրադին Սալմաստից Սիրիի հասցնելով՝ դառնում է ինքնաճաճման կտտանքի հուսալից վախճան, որը քերելու է ինքնաքննության համարձակություն և ետքարձի հնարավորություն:

Եթե Դավիթ Բեկը գալիս է «դրսից»՝ Վրաստանից, ազգավիրկից առաքելությամբ, որի անձնազնի կայծը Ռւշ-քափեի քառասուն հոգիանոց հերոսական կոիվն էր լինելու, ապա **Ճանապարհի** այդ խորիրդին ենթակա չէ Պարույր Հայկազնը, ում համար «դրուսը» այդպես էլ չի դառնում «ներսի» վերափոխիչ գործոն: Ընդ որում «դրուսը» Րաֆֆու աշխարհայացքում չպիտի ընկալվի որպես քաղաքական արևմտամետություն, որքան էլ Գրիգոր Արծրունու ազդեցությամբ դրա տարրերը լինեն, ասենք, «Կայծեր»-ի վերջում նշված՝ Վանի փաշայի փոխարեն եվրոպացի նահանգապետի փաստով. գորդի համար որոշողը միշտ մնում է սեփական գենքի ուժով ազատության ձեռքբերման հնարավորության վաստակումը:

Սեկ այլ պարագայում ազգային «սահմանափակությունից» իրեն դուրս դրած աշխարհաքաղաքացի ճարտասանը՝ Պրոերենիոսը, ով հայրենիքի օգնության կանչը փոխարինում է կայսերը հղած խնդրանքով՝ «դյուրացնել արենացոց մարմնական սնունդը»²⁶, չի ազդկում Մովսես Խորենացու բացատրությունից, թե դրսում «այլս մնալ չեմ կարող... Հայրենիքից վաստ լուրեր ստացա, շտապում եմ այնտեղ»²⁷, կամ այն իշեցումից, որ Արևմուտք կրթության են եկել նաև Դավիթ Անհաղթը, Եզնիկ Կողբացին, Կորյունը, Եղիշեն, Ղազար Փարպեցին, ինքը՝ Քերքողահայրը, բայց հիմա նրանք բոլորը «շտապում են զնալ: Նրանք տանում են իրանց հետ մի նոր գենը՝ Հայաստանը փրկելու, և դա է լուսավորությունը»²⁸: Սա պարզ է նույնքան, որքան այն, որ անհետ է մնալու Պարույր-Պրոերեսիոսի նմանների վախճանն ու գործը. իր վերոհիշյալ սերնդակիցների (կա 4-րդ և 5-րդ դարերի անարդունիզմ) ազգանվեր տառապանքի ու անմահության կողքին նաև մեռավ փառքի մեջ ու հետո մոռացվեց ընդհանրապես, քանի որ «հայ մարդու

25 Նույն տեղում, հատ. 4, էջ 12: Պատահական չէ, որ Րաֆֆու մահվանից մեկ տարի անց՝ 1889-ին, այս նույն տեղում՝ Չուխ-Կետուկում գոկեցին հայ ազատամարտի առաջին նահատակները Վարդան Գոլոյշյանն ու Յովհաննես Ագրիպասյանը:

26 Նույն տեղում, հատ. 7, էջ 549:

27 Նույն տեղում, էջ 529:

28 Նույն տեղում, էջ 531:

սրտում մի փոքրիկ տեղ անգամ չգտավ»²⁹:

Այսպիսով, **ճանապարհը** որպես ճանաչողության, «ներսի» և «դրսի» հարաբերության բարդ հանգամանքների կրող, յուրովի օգնում է բացահայտելու նաև ոռմանտիզմի հերոսի՝ մերժված ու անձնազոհ անհատի գաղափարական ու հոգեբանական ինքնատիպությունները, դատնում է **կերպարի** գեղարվեստական իրացման միջոցներից մեկը: «Ներսի» միջավայրում հստակ պատկերացնելով խեղճության ակունքներից մեկը, այն, որ մեզանում ծնունդից սկսած՝ երեխային վախի ու ծեծի մեջ են պահում, և «դաստիարակության այդ բրացնող սպանիչ եղանակն այն հետևանքն է ունենում, որ ոչ միայն խլում է մանուկից նրա ինքնուրույն ազատ զարգացումը և ոչ միայն բարոյապես մեոցնում է նրան, այլ նա իր ամբողջ կյանքում մնում է երկշոտ, բոլասիրտ, խոնարհվող գլուխը ծոռող ամեն մի զորության առջև»³⁰ («Հայ երիտասարդությունը»), Ռաֆֆին ազատ և ըմբոստ կերպարները բերում է «դրսից»՝ նրանցում մարմնավորելով և՝ աշխարհայացքի, և՝ բնավորության կայուն շերտեր: Դաստիարակության սկիզբը ընտանիքն է, ուստի Ռաֆֆու կին հերոսները, որոնք մայրեր են կամ դառնալու են, հիմնականում ուժեղ բնավորություններ են: Չարունակությունը նոր դպրոցի ոչ սխոլաստիկ կրթադաստիարակչական իիմունքներն են, իսկ ամբողջացումը՝ կյանքի ճանաչողության իմաստուն դասերը: Ռաֆֆին նկատում է, որ «մի ազգ երբեք չէ կարող կրթության կատարելազործությանը հասնել, քանի նորա մեջ չէ զարգացած ընթերցանության սերը»³¹, և տերթողիկյան մերժելի դպրոցին հակառում է ոչ միայն Կարոյի դպրոցը՝ լայն ու նեղ առումով, այլև իրական օրինակ է դիտում Խրիմյան Հայրիկին: Գրողի համար առանձնահատուկ իմաստ ուներ, որ իր ժողովրդանքեր գործունեության սկզբում «յուր երկու ընկերների հետ նա զնաց ճանապարհորդել Արարատը, Շիրակա նահանգը և Գողբանի գավառը, տեսավ Անին և Հայաստանի նշանավոր իիշտակարանները»³², իսկ կրոնավոր դարձավ, «որպեսզի այդ միջոցով կարողանա յուր զաղափարները տարածել ամրոխի մեջ... Սկսավ եկեղեցու բեմից քարոզել ժողովրդի առօրյա կյանքի՝ նրա պիտույքների մասին, հորորել նորան դեպի ուսում, արհեստ և գիտություն»³³:

Միայն ուժեղ անհատը կարող է դուրս գալ նեղ անձնականից և, անկախ օտարման չափից, ընդունակ լինել անձնազոհության, որը պարտադիր չէ՝ հասուն դաստիարակության արդյունք լինի: «Հարեմ» վիպակի Ալմատն ու Մեխակը փախչում են գերությունից ոչ թե իրենց աղարտված սիրո փշրանքներով մնացած օրերն անցկացնելու, այլ կրվելու ուրիշների սիրո և երջանկության համար: «Զալալենդին»-ի Սարհատը սկսեց մշուշված զգալ միայն սիրած էակին փրկելու ձգտումը, իսկ ելքի գիտակցությունը կայունացրեց Դալի-Բարայի (Գիծ տերտերի) դաժան ճառը, որով նա մեղադրում էր նախնիներին, ովքեր բերդեր ու ամրոցներ կառուցելու փոխարեն, զենքի հետ մտերմանալուն հակառակ, «լցրիք մեր գլուխը ունայն, վերացական ցնորքներով... Դուք ավելի պնդացրիք մեր ստրկության շղաները»³⁴:

Կյանքի պայմաններն ինքնին ուժեղ ու ճկուն էին դարձել «Խենք»-ի

29 Նոյն տեղում, էջ 551:

30 Նոյն տեղում, հատ. 11, էջ 201:

31 Նոյն տեղում, հատ. 10, էջ 157:

32 Նոյն տեղում, էջ 174:

33 Նոյն տեղում, էջ 175-176:

34 Նոյն տեղում, հատ. 4, էջ 53:

Վարդանին, մաքսախույսի գրադմունքը ստիպել էր շրջել Հայաստանի երկու հասվածներում էլ, ճանաչել երկիրն ու նրա մարդուն, կարողանալ խուսափել ցանկացած բարդ իրավիճակից, մինչև որ Դոդուկջյանի կամ Լևոն Սալմանի հետ հանդիպումը հնարավորություն ընձեռներ նրա ուժը գիտակցորեն ճիշտ ուղղորդելու դնախի ժողովորի փրկությունը: Իսկ առաջմ՝ պաշարված Բայազեղից խենքի երգ ու պարով, «Ալաշկերտի կողմերը տանող ճանապարհով միայնակ գնում էր»³⁵ նա: Այս երիտասարդը ուներ իր «պարապմունքին հարմար բոլոր պայմանները՝ արիություն, ճարպկություն և սատանայական խելք»³⁶, ահա թե ինչու «նա ճանաշված էր մականունովս «խենք»: Նա շատ կարդացել էր, բավականին ճանաչում էր կյանքը, կեղծել չգիտեր, մինչև անգամ չէր թաքցնում իր սեփական սխալները»³⁷: Խենքության առօրյա-կենցաղային շերտերի մեջ գաղափարական ընդհանրացումը հաստատում է գաղափարակիր հերոսի ոռմանտիկական բովանդակությունն ընդհանրապես, և պատահական չէ Վարդանի արձագանքը Դոդուկջյանին արված անմիջական բնութագրին: Լևոնի «Եվրոպական» ճառի վլա «զյուղացիները ծիծաղեցին, հոհուացին և ոչինչ չպատասխանեցին: Մեկը նրանցից ասաց՝ այդ մարդը խենք է:

- Փա՛ որ Աստուծո, խենքը մենակ ես չեմ եղել - ասաց Վարդանը ծիծաղելով»³⁸:

Խենքության ամրող խորիդավորությունն է պահպանվում նաև Կարոյի, Ալվանի և նրանց խմբի բոլոր անդամների գործունեության մեջ: Պատահական չէ, որ «ներքին» տարածքի խեղճության կրող Ֆահրատը (ում պիտի ազատության գիտակցության բերեն նոյն խենքերը) դեռևս անընդհատ պիտի մտահոգվի: «Կարոյի իսկական նպատակը դարձյալ մնում էր ինձ համար մթության մեջ»³⁹, որից և՝ բնական գնահատականը: «Կարոյի և նրա կուսակիցների նպատակը թվում էր ինձ ոչ միայն անգործադրելի, այլ որպես ցնորք»⁴⁰: Էրիկական այդ սահմանների մեջ Կարոն հայտնվում է դեռ մանկուց, և նրա տեսակը կրկին խենքության յուրօվի դրսեւորում է: «Թողննելով դպրոցը՝ այնուհետև Կարոն վարում էր լի փորձանքներով քափառական կյանք: Չատերը նրան համարում էին ցնորված»⁴¹: Մուրադին հանգամանքները նոյն վերջնարդյունքին են հասցնելու՝ իսկական քավարան անցկացնելով, այսինքն՝ նրա ուժը, ըմբոստությունը, համարձակությունը (խենքության այստեղային հայտանիշները) ազգօգուտ որակ են դառնալու խաչգործության ուղիներով անցնելուց հետո: «Տասնյոթ տարեկան էի ես, երբ ոտքը դուրս դրեցի հայրենական երկրից: Այն օրերից անցել էր յոթ տարի ևս, որ ես քափառում էի օտարության մեջ... Մի անգամ գոնե չզարքնեց իմ մեջ ինքնարձնության միտքը»⁴²: Մի դեպքում ժողովորին պատաժ խեղճության թմբիրն է միջավայրը, մյուս դեպքում՝ հանցանքի ներարկած բրությունը: Եվ դրանցից դուրս գալու ելքը ինքնարձնությանը ինքնաճանաշման հասնելն է իր իսկ վիպասանի առաջադրած ուղիներով:

Ճանապարհի տրամարանությամբ ներկայացվող «ներսի» և «դրսի» **տարածական** կարգերը ստանում են նաև **Ժամանակային** յուրօրինակ դրսեւորում՝ **ներ-**

35 Նոյն տեղում, էջ 16:

36 Նոյն տեղում, էջ 223:

37 Նոյն տեղում, էջ 223:

38 Նոյն տեղում, էջ 249:

39 Նոյն տեղում, հատ. 5, էջ 497:

40 Նոյն տեղում, էջ 432:

41 Նոյն տեղում, էջ 385:

42 Նոյն տեղում, էջ 100:

կայի և անցյալի նույնաբնույթ հարաբերություններով. ներկան հատկանշվում է ընդարձացման նույն ճապաղով, անցյալը, իր դրամատիկ էջերով հանդերձ, ընկալվում է նաև բարձր հերոսականությամբ, որի արդիական հնչեղությունը ոռմանտիկ Ռաֆֆու համար ունի ուղղակի գոյածնային արժեք:

Պատմությանը գրողն անդրադառնում է ոչ միայն պատմագեղարվեստական երկերում կամ գիտական ուսումնասիրություններում, այլև ժամանակակից կյանքը պատկերող գործերում: Այլ խոսքով՝ պատմությունը նրա պատկերած դեպքերի ու դեմքերի մշտական ուղեկիցն է: Այսպես, «Տարոնի և Վասպորականի անցյալ և արդի փիճակը» (1876 թ.) խոսուն վերնագրով հոդվածում նա գրում է. «Հայոց-ձորով անցնելու միջոցին հայր միշտ հիշում էր յուր Նահապետի՝ Հայկ դյուցազնի՝ այն մեծ հսկայի կրիվը Ներքովքի հետ: Նա ցոյց էր տալիս յուր զավակներին Նեմրութա (Ներքովքի) սարը, որ մեր նախապապը վեր հանեց տիտանների որդիվոր դիակը»⁴³: Այսպես ազգային հոգսի մեջ միշտ ստվերանում են անցյալի ու ներկայի սահմանները, պատմությունը խոսում է նշանավոր վայրերով, այսօրվա մարդու բերանով: Իր «Սուրբ ոսկերք» բանաստեղծության տողատակին, օրինակ, Ռաֆֆին նշում է. «Այս երգը գրելուն առիթ է տվել մի ավանդություն, որ 1856 թվին, անցնելով Ավարայրի դաշտից, լսեցի մի շինականից»⁴⁴:

«Կայծեր»-ի սյուժետային հենքը կազմող **ճանապարհորդությունը** հայի ու Հայաստանի ճանաչողության մեջ միշտ հիմնավորապես ներառում է նաև պատմությունը: Ռաֆֆին անցյալի դասերի կարևորությունը ընդգծում է՝ ծաղրելով դրանք չընկալողների ներմուծությունը: Ահա մի դրվագ Վանի Սիմոն պատվելիի դպրոցում.

«-Հայոց պատմություն սովորում են,- հարցրեց Ապանը:

-Ի՞նչ պետք է հայոց պատմությունը,- պատասխանեց պատվելին իր սովորական ժպիտով,- հայոց քաջավորները բոլորն էլ կրապաշտ էին»⁴⁵:

Նման ակնառու փաստերը առավել կա պիտի ստիպեին տեսանելու բացատրել անցյալը, ինչը բարեխսիդ պարտավորությամբ անում է Ապանը՝ Ֆահրատի ինքնագիտակցության ձևավորման նոտահոգությամբ: Վիպական սյուժեն առատ է այդպիսի «ընդմիջարկություններով»: «Ճանապարհին Ապանը մի քանի հետաքրիր տեղեկություններ հաղորդեց Կտուց անապատի անցյալի մասին»⁴⁶: Կամ «Արտամետը համարյա մի դուռն է, որտեղից պետք է մտնել Հայոց ծորը՝ մեր Հայկ նահապետի սիրազործության վայրը... Սեր նախնիքը ծույլ մարդիկ չեն եղել,- ասաց Ապանը»⁴⁷: Կամ էլ՝ **անցնում են Ռշտունիքով**, և միայն անունները վեհացնում են տարածիքի հերոսականությունը. «Այստեղից էր Քարզափրան սպարապետը... Այստեղից էր Թեոդորոս Ռշտունին՝ յոթներորդ դարու հերոսը: Այստեղից էր հիշյալ Թեոդորոս իշխանի որդի Վարդ Պատրիկը՝ հունաց ոխերիմ քննամին... Գագիկ Արծրունին ավելի գեղեցկացրեց Ռատանը»⁴⁸ և այլն:

Անգամ պատմական թեմայի մեջ պատմական հերոսները պատեհ առիթ եղած դեպքում չեն շրջանցում շատ կամ քիչ հեռավոր անցյալի նշանավոր հերոսներին, քանի որ ժամանակների հարաբերականության մեջ, իսկապես,

43 Նոյն տեղում, հատ. 10, էջ 269:

44 Նոյն տեղում, հատ. 1, Եր., 1983, էջ 41:

45 Նոյն տեղում, հատ. 6, էջ 43:

46 Նոյն տեղում, էջ 131:

47 Նոյն տեղում, էջ 244, 253:

48 Նոյն տեղում, էջ 276-277:

այսօրը վաղվա երեկն է, և ոչինչ չպետք է կորչի, եթք նորը լավ մոռացված հինն է, իսկ միշտ արդիական ուժ ունեցող՝ Խորենացու երեք կատարելատիպ հերոսները (Հայկ-Արամ-Տիգրան) օրինակ են մնում, ասենք՝ Դավիթ Բեկի համար ևս. «Մենք ունեցել ենք Հայկ, որ տիտանների հետ էր պատերազմուն: Մենք ունեցել ենք Տիգրան, որ ջնջեց վիշապների ցեղը»⁴⁹: Անցյալի հայրատ Վերիուշը ազգային սնապարծություն չէ, այլ խեղճուրյան թանձը մքնոլորտից դուրս գալու ճիզ, Դավիթ Բեկի ու մանավան՝ Սամվելի ամերևակայելի անձնազնությամբ դաս տալու նպատակի կողքին օտարի լծից ազատվելու, ներքին անմիաբանության ճաքերը ծածկելու դժվարին ծրագրի իրագործում:

«Սամվել» վեպի սյուժետային հիմքը ևս ճանապարհն է՝ սկսած «Երկու սուրհանդակի ուղուց» մինչև Ողական և այնտեղից Խշխանաց կղզի ու կրկին Ողական, որի ընդգրկուն խորհուրդը կա վերնազրերում ևս՝ «Մեկը-արևմուտքում, մյուսը-արևելքում», «ճանապարհները բաժանվում են», որտեղ երկուստեր ցուցադրվում է նորքվող երկրի ողբերգությունը. «Մի շաբաթ առաջ երկու եղբոր որդիներ դուրս եկան Ողական ամրոցից... Երկուսի ճանապարհները բաժանվեցան: Առաջինը (Սամվելը-Վ.Ս.) գնում էր Վանա ծովակի հարավ-արևելյան եզերքով: Իսկ երկրորդը (Մուշեղը-Վ.Ս.) գնում էր նույն ծովակի արևմտյան եզերքով: Նրանք գնում էին վտանգմերի և սարսափմերի միջով»⁵⁰: Մուշեղը Շահապիվանի հաղթանակի և Արտագերսի պաշարման փորձություններով պիտի գնար և Արևմուտքից անտականության նոր կրողին բերեր, քանի որ զիստաված երկրի կարողիկոսը աքսորված էր, քազակոր՝ բանտարգելված, սպարապետ՝ մորթագերծ արված, և հույսը մնում էր Բյուզանդիայից Պապ քազաժառանգի վերաբարձր:

Իսկ Սամվելի **ճանապարհի** կտտանքը պիտի համոզիչ դարձներ ծննդապանության մղձավանջը, և այդտեղ կարևոր հոգեբանական ազդակ էր լինելու տեսածի մասին կրկնվող հարցերի ծանր պատասխանը.

«- Ո՞վ ոչնչացրեց այդ բոլորը:

- Քո հայրը, տեր իմ:

- Իմ հա՞յրը... - գոչեց որդին, և կարծես կայծակով շանթեցին նրա ճակատը»⁵¹:

Վանի բերդի պարիսպմերից կախված է Համազասպուհու՝ Աշխենի մոր մերկ մարմինը.

«- Ո՞վ կախաղան հանեց:

- Վահան Մամիկոնյանը:

- Կայե՞ն... - բացականչեց խեղճ երիտասարդը՝ աչքերը բռնելով: - Նա սպանեց եղբորը, իսկ դու՝ քո քրոջը»⁵²:

Անձնազնության այս **ճանապարհների** ուղղակի հակադրությունն է արտաքինով Սամվելին նման քեռու՝ Մերուժան Արծրունու զիխակորույս փախուստը Հաղամակերտից՝ իր հովիվների վրանները, կործանվող Արտագերսից՝ Նախճավանի պատերազմը, երբ տան դրներն են փակում հարազատները, նրա դեմ զորք է հանում մայրը, և սա **փախուստ** է ինքնամերժման ու մենակուրյան սառնությունից, որ արդեն իսկ դավաճանի էությունն է. «Մերուժանը խելազարի նման զգիտեր՝ որ

49 Նույն տեղում, հատ. 7, էջ 263:

50 Նույն տեղում, հատ. 8, Եր., 1986, էջ 225:

51 Նույն տեղում, էջ 231:

52 Նույն տեղում, էջ 271:

կողմը գնալ: Նրա ականջներին զարկում էին բոթարեր աղաղակները»⁵³:

Ճանապարհի կարևորագույն խորհուրդներից մեկը ներկայանում է որպես գուտ գեղարվեստական հճարանք, որը ապահովում է դիպաշարի ներքին լարվածությունը, իր մեջ առնում ընթերցողի զգայական-բանական էությունը: Դա Շաֆֆու համար կարևոր էր այնքանով, որ նա պիտի խեղճության մեջ տապակվող հային ինքնաճանաշման և ազատության գիտակցության բերեր՝ վատահ լինելով, որ իսկապես, մի լավ վեպ կարող է մի ազգ փրկել: Այդ գեղարվեստական հնարանքը, որի նկատմամբ միշտ անտարբեր չէ միջին ընթերցողը, արկածայնությունն է.

Ճանապարհը չի կարող զուգակցվել անսպասելի անցումներով, խորհրդավոր հանդիպումներով, վտանգավոր միջադեպերով, որոնք ինքնին կոմպոզիցիոն լարվածության միջոցներ են: Եվ բնապատճերն ու տեղամբի նկարագրությունը, և՝ իրավիճակային ուղղակի պատումները, և՝ կերպարի բնավորության շերտերը անընդհատ պահում են իրենց մեջ խորհրդավորության և անսպասելիության ենթախորքային իմաստներ: Ահա մի հատված «Հարեմ» վիպակից. «Մին զիշեր էր: Կայծակը փայլատակում էր: Որտող արսագիտի կերպով թնդեցնում էր սարերը, և երկինքը անձրևում էր հեղեղի պես... Մի ծորի մեջ, մի ահազին այր (մաղարա) յուր կամարների տակ ընդունել էր բոլորովին այլ տեսակ հյուրեր: Դրանք ավագակներ էին՝ թվով մինչև քսան հոգի»⁵⁴ Ալմատի և Սեբասկի խումըր:

Եթե Ըաֆֆու առաջին վեպում՝ «Սալբի»-ում (որի նախնական տարրերակն ուներ «Խվլիկ» վերնագիրը), դև Խվլիկի կերպարը, իր արևելյան ամքող հերթաբայնությամբ, իշեցնում էր զործի գեղարվեստական հնչեղությունը նրանով, որ կասեցնում էր դեպքերի ներքին լարվածությունը՝ հերոսներին ղծվար իրավիճակներից փրկելու ամենակարողությամբ, ապա հետագա զործերում սկսած «Խաչագողի հիշատակարամից», արկածը Ըաֆֆու վեպերի գեղարվեստականության կարևոր որոշչներից է, որ ներկայանում է որպես **Ճանապարհի բաղադրույթ**: Նոյնիսկ «Խենք»-ում, որն ունի «Արկածներ վերջին ոռութուրքական պատերազմից» ենթավերնագիրը, և որի կառուցվածքը այլ զաղափարական նկատառումների արդյունք է, միևնույն է նոյն խորհրդավորությունը կա ոչ միայն Վարդանի զործի մեջ, այլ ուրիշ իրավիճակներում ևս: Այսպես, «Պարոն Սալմանի՝ Բագրևանդ զավառում հայտնվելուց դեռ մի ամիս առաջ արգրումցի հաջի Միսար անունով ջորեպանը բեռնավորեց իր քարավանը և ճանապարհ ընկավ»⁵⁵, իսկ նրա քարավանում էր իրեն Մելիք-Մանսուր անվանող մի վաճառական, ով շատ լեզուներ զիտեր, նաև զենքի վաճառքով էր գրադարձ, բայց **Ճանապարհի կեսին** անհայտացավ, և Սալման-Դուդուկջանը քացարեց: «Նրա արկողը, սիրելիս, ձեռնածուների արկողիկ նման երկու հատակ ունի... Ստորին հատակի մեջ գտնվում են այնպիսի մթերքներ, որոնց սպառելու այժմ ամենահարմար ժամանակն է»⁵⁶: Խորհրդավորությունը կարևոր տեղ ունի «Դավիթ Բեկ» վեպում ևս, եթե հիշենք բեկուզ Ստ. Շահումյանի կողմից կեղծ կնիքներ պատրաստել տալու ընթացքը, Սյուրիին ու նրա դայակ Ահմադին, վրաց միջավայրը և այլն:

Բայց որպես ճանապարհի կառուցվածքային բաղադրամաս՝ արկածը «Խաչազորի հիշատակարան»-ից հետո որոշիչ է դարձնում «Կայձեր»-ում և

53 Նույն տեղում, էջ 487:

54 Նույն տեղում, հատ. 2, Եր., 1983, էջ 422:

55 Նույն տեղում, հատ. 4, էջ 269:

56 Նույն տեղում, էջ 281:

«Սամվել» պատմավեպում: Առաջինում դրա արտահայտությունն ընդգծվում է հերոսների ամբողջ ճակատագրով՝ որտորդ Ավոյի կերպարում, Հյուքի ու Սուսանի խորհրդավոր հայտնություն-անհայտացումների մեջ, «ոյութական զավազանի» լրաբերական առկայությամբ, Քավոր Պետրոսի դերվիշային գործով, այս կամ այն առիթով իիշվող զրոյցներով և այլն: Անգամ բարձ դաշնուն է լարվածության կրողը և՝ պատկերներում, և՝ վերնագրերում՝ «Հին մեղքը», «Զենքեր», «Մրին գաղտնիք», «Վհուկը», «Որսորդի տնակը», «Սիրահարի գերեզմանը», «Երկու որս միասին», «Մրիեկի արշավանքը», «Խորհրդավոր արեղան», «Դիմակը պատովում է», «Գիծ տերտերը և բժիշկը», «Սատնություն» և այլն: Սրանց մեջ ամեն վիպական դրվագ ներքին լարվածության մեծ լիցք ունի, ինչպես՝ «Իմ ականջին զարկեց բուի ձայնը... Ես քարը նետեցի ուղիղ այն կողմը, որտեղից լսելի եղավ նրա ձայնը: Բարձրացավ մի ճիշ, որ նման էր ադամորդու հառաջանքի: Ես սոսկացի: Փլատակների մեջ կծկվել էր մի պառավ կին՝ փաթարված հիմն, մուգ կապտագույն սփածանելիքի մեջ»⁵⁷, և հետո՝ այդ կնոջ մոխրացող հուշերի կցկտոր պատահիմները, որ Կարոյի ու նրա ընտանիքի անցյալի մասին լարվածության պայքարուններ են. «Կարոն բոլորը գիտե: Երբ Դինբովի խանը կողոպտեց, կոտորեց մեր ցեղը, Սուսանը կապեց իր քամակին Կարոյի երեխան և մենակ անցավ Հերաքի անապատներից...»⁵⁸:

Հաճախ արկածի լիցքը խստանում է բառերի տպավորչականության մեջ. «Ինձ թվում էր, թե ես ընկած եմ մի կախարդված ամրոցի ավերակների մեջ, թե մի ոյութական ձեռք ինձ բերեց դիվանակներ, թե Կարոն, Ավանը, Սագոն, այդ բոլորը առաջոր և խարեական պատկերներ էին»⁵⁹:

«Սամվել» վեպում, որ պատմական եղելությունները, հերոսներն ու նրանց գործերը անընդհատ պահպանում են անսպասելիության լարումը, որևէ մեծ կամ փոքր դրվագում արկածայինը ստանում է ուղղակի արտահայտություն, բայց միշտ մնում բնական ու ինքնարուխ և ոչ թե դառնում պարտադրված էֆեկտի ներմուծում. «Այդ խառն, աղմկալի միջոցում Սամվելի ասպախումքը անցնում էր Տարոնից դեպի Ռշտոնիք տանող ճանապարհով»⁶⁰: Սամվելին զարմացնում էր մարդու բացարձակ բացակայությունը այդ ամբողջ տարածքում, մինչև որ նրան բացատրում են. «Կամենու՞մ ես մարդ տեսնել... Բավական է վորչիկների (ոշտոնցիների-Վ.Ս.) եղանակով մի անգամ աղաղակել՝ «հա՛յ-ին՛յ», և կտեսնես, որ քո ձայնը կրկնվեցավ հազարավոր բերաններում և անցավ հեռու և հեռու, մինչև անտառի խորքերը: Այդ ժամանակ գետնի տակից, ժայռերի խոռոչներից, մացառների միջից դուրս կհոսէ վայրենի բազմությունը»⁶¹:

Այսպիսով՝ իր ազգի տվյալ ժամանակի վիճակի ու հոգսի պարտադրանքը և այն հալքահարելու, ինքնաճանաչում ու ազատություն ուսուցանելու խնդիրը գերազույն նպատակ դարձրած վիպասանը, ով կարող էր անգամ կիսատ բողնել ընթերցողի կողմից միշտ սպասված որևէ վեպ և սկսել նորը, եթե օրվա խնդիրը առաջարում էր այդ նոր վեպում արծարծված գաղափարների անհրաժեշտություն, ով հային ներկայացրեց իր երկիրը անցյալի ու ներկայի բոլոր մանրամասներով՝ վստահ լինելով, որ միայն սրափ, բայց ոչ ինքնախարեա-

57 Նույն տեղում, հատ. 5, էջ 398:

58 Նույն տեղում, էջ 399:

59 Նույն տեղում, էջ 395:

60 Նույն տեղում, հատ. 8, էջ 226:

61 Նույն տեղում, էջ 228:

կան «հայրենագիտությունը» կարող է դառնալ փրկության առհավատչյա, ճիշտ էր ընտրել այդ ամենն իրագործելու և զանգվածային ընթերցող ունենալու ուղին՝ **Ճանապարհը** իր բազմապիսի խորհուրդների արդյունավետ ամբողջականությամբ:

Ճանապարհի յուրաքանչյուր խորհուրդ այս գաղափարական ու գեղարվեստական ծրագրի ուրույն ընդգրկումն ուներ: Այն **Ճանաչման** (հայրենագիտության) և **ինքնաճանաչողության** արդյունավետ գործոն էր, որով ազգը պետք է ինքնախարեւության անշարժությունից անցներ առաջընթացի եռանդ ապահովող կենսաձևին:

Ճանապարհը հիմք էր տալիս նախանշելու ոռմանսիզմի պոետիկային քննորոշ՝ «ներսի» և «դրսի» հարաբերությունների տարածական շառավիղներն ու վիխիստփայական շերտերը, երբ «ներսի» խեղճության մքնուրութը պիտի հաղթահարվեր «դրսից» եկած գաղափարակիր անհատի անձնազոհությամբ՝ այդ կերպ բացելով նաև կերպարի հոգեբանական բնուրագիրը: Ժամանակային առումով այդ հարաբերությունը դառնում էր դրամատիկ ներկայի և հերոսական անցյալի հակադրության արդիական գործոն: Իսկ վերջում՝ **Ճանապարհի** կարևոր խորհուրդներից մեկը արկածի ինքնարուխ ներառումն է, որի գեղարվեստական նպատակադրումը լայն ընթերցողական լարան ունենալը ու նրա գաղափարական դաստիարակությունն է:

Այդ կերպ Մաֆֆին՝ ինքը, դարձավ ազգի դժվարին **Ճանապարհի հավերժական ուղեկիցը**:

THE SYMBOL OF ROAD IN THE PROSE OF RAFFI

On the 175-th Anniversary of the Great Novelist

Vazgen H. Safaryan